



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ԼՍԱՐԱՆ

Ազգային Առաջնորդարանի հովանաւորութիւնը վայելող մեր կիրակնօրեայ դպրոցները, իրենց նուիրեալ ուսուցչական կազմերով եւ համաձայն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Տօնակարգին, հայ մանուկներուն եւ պատանհներուն կը ջամբեն կրօնական եւ հայեցի առողջ դաստիարակութիւն:

Կիրակնօրեայ դպրոցներու ուսումնական 2006-2007 տարեշրջանի նախօրեակին, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ կազմակերպութեամբ Առաջնորդարանիս Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակին, Շաբաթ, 9 Սեպտեմբեր 2006ի յետմիջօրէ ժամը 2-6, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցչական կազմերու սեմինար: Հաւաքին կը մասնակցէին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչները՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, թեմիս եկեղեցիներու Յոգեւոր Յովիւներ, Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչներ եւ ուսուցիչներ:

Բացման աղօթքէն եւ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգէն ետք, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Խորհուրդի ատենապետ Տիար Յակոբ Զաղացպանեան բարի գալուստի խօսքերով ողջունեց ներկաները եւ սեմինարի աշխատանքներուն յաջողութիւն մաղթեց:

Հաւաքը ընթացաւ չորս հանգրուաններով.

ա.- Ուսումնական տարեշրջանի իւրաքանչիւր ամսուան տօներուն եւ կիրակիներուն առնչուող ծրագիրներու եւ աշխատանքներու ներկայացում:

բ.- Սեպտեմբեր եւ Յոկտեմբեր ամիսներուն դասաւանդուելիք նիւթերու (աղօթք, սաղմոս, մաղթանք, շարական, ազգային-եկեղեցական տօներ) ներկայացում:

գ.- Սեպտեմբեր եւ Յոկտեմբեր ամիսներուն զուգահիւսով, Խաչի ու Թարգմանչաց տօներուն յատուկ շարականներու ուսուցում:

դ.- Ս. Գրային եւ աւետարանական դրուագներու, դէպքերու եւ պատմութիւններու լուսապատճենով ներկայացում:

Իւրաքանչիւր հանգրուանի աւարտին, ներկաներուն առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու, տրուեցան սպառիչ բացատրութիւններ:

Առաջնորդ Սրբազան Հայրը, իր կարգին, գնահատեց ուսուցչական այս հաւաքը, որ ոչ միայն առիթ մը եղաւ ամառնային արձակուրդէ ետք գիրար ողջունելու, այլեւ՝ հասարակաց մտահոգութիւններ բաժնեկցելու, կիրակնօրեայ

դպրոցներու ուսումնական աշխատանքները ծրագրելու, որպէսզի առաւել կանոնաւոր ու արդիւնաւոր ընթանան մեր յառաջիկայ կրօնադաստիարակչական աշխատանքները: Ապա, խօսելով Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ տարուող քրիստոնէական դաստիարակութեան ծրագիրներուն եւ աշխատանքներուն մասին, Սրբազան Յայրը յիշեցուց, որ շուտով լոյս կ'ընծայուին Ս. Գրային եւ Աստուածաշնչական դէպքերու գեղատիպ լուսանկարներու հաւաքածոն, Կիրակնօրեայ Դպրոցներու կիրակնօրեայ դասաւանդութեանց ամսական ծրագիրը, ինչպէս նաեւ երգերու եւ շարականներու ձայներիզները, դասաւանդութիւնները աւելի հաղորդական եւ հաճելի դարձնելու նպատակաւ:

Վերջին բաժինով, ներկաներուն պաստառի վրայ ցուցադրուեցան Հին եւ Նոր Կտակարաններու դէպքերու եւ Աստուածաշնչական դրուագներու պատկերները:

Հաւաքը Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթերգով եւ աղօթքով իր աւարտին հասաւ երեկոյեան ժամը ճին:

SUNDAY SCHOOL TEACHERS SEMINAR

On Saturday, September 9, 2006, a seminar was held for Western Prelacy Sunday School teachers in preparation for the 2006-2007 academic year. The seminar, held under the auspices of and presided by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Christian Education Department, took place at St. Mary's Church in Glendale from 2:00 to 6:00 p.m. Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian participated in the seminar along with pastors and Sunday School directors and teachers.

Following opening prayer and the singing of the Sunday School hymn, welcoming remarks were made by Mr. Hagop Chaghasspanian, Chairman of the Sunday School Central Council. The seminar was comprised of four sessions:

- (1) Presentation of projects and activities related to the feasts of each Sunday during the academic year.
- (2) Presentation of topics to be taught in September and October (prayers, psalms, hymns, feasts).
- (3) Instruction of special hymns relating to the Feasts of the Exaltation of the Cross and of the Holy Translators, which occur in September and October respectively.
- (4) Video presentation of stories and events of the Bible.

A question and answer session followed each presentation.

The Prelate commended the seminar, which gave participants the opportunity to voice concerns and plan future projects. Speaking of the endeavors of the Christian Education Department serving under the Prelacy, the Prelate reminded the teachers that new teaching aids would soon be released, including illustrations of Biblical stories and events, a monthly curriculum, and a CD of songs and hymns.

The seminar concluded with the Sunday School hymn and prayer.